№ 115 Յուլիսի 5 (17) 1880 Յուլիսի 5 (17) № 115

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներսէս պատրիարքից արած քայլը։—Ներքին տեսութիւն։ Հրաւէր։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Ղովտի կինը։

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՐԱԾ ՔԱՅԼԸ

Մեր Կ. Պոլսի մշտական թղթակից, Հայկակ, հաղորդել է մեզ իր նախավերջին նամակում որ Կ. Պոլսի Հայոց պատրիարք Ներսէս սրբազանը նորերումս մի այնպիսի քայլ արաւ, որ թէև լուսաւորված Եւրոպայում շատ բնական կերևար, բայց մեզանում, հայերի մէջ, վերին աստիճանի համբերողութեան նշան պէտք է համարվի, և կը հաշվի մեր նոր պատմութեան մէջ որպէս նշանաւոր դարագլուխ։

Ի՞նչ արաւ Ներսէս սրբազանը. նա դարևոր նախապաշարմունքները թողած, այցելեց Կ. Պոլսի մէջ գտնված Ռօբէրտեան բողոքական դպրոցը, սիրալիր կերպով խօսեց հայ-բողոքական երեխաների հետ և դպրոցում ուսում առնող հայ-լուսաւորչական աշակերտների հետ, հետաքրքրվեց դպրոցի ուսման ընթացքի մասին, ամենքին տուեց իր օրհնութիւնը և մեկնեցաւ դպրոցից։

Սրբազանի վարմունքը ինքն իրան շատ հասարակ և բնական է, բայց մեզանում, որտեղ դեռ ևս վայրենի մոլեռանդութիւն է տիրում, որտեղ հայ-բողոքականների վրա նայում են որպէս յանցաւորների վրա,—Ներսէս սրբազանի արած քայլը մեծ նշանակութիւն ունի։

Մեզանում, Ընդրկովկասում, հայը այդ տեսակ բարոյական և մտաւոր զարգացման աստիճանի դեռ ևս չէ հասել։ Նա խորթ աչքով է նայում իր բողոքական եղբօր վրա, նրան հայ չէ համարում, թէև բողոքական հայերից շատերը լուսաւորչական հայերից էլ լաւ հայեր են։ Մինչև որ լուսաւորչական հայերի մեծ մասը արհամարհանքով են վերաբերվում դէպի իրանց մայրենի լեզուն, մեր ինտելիգենցիային պատկանող հայ-լուսաւորչական ընտանիքներում ամօթ են համարում հայերէն խօսել և հայոց լեզու սովորեցնել իրանց զաւակներին,—մեր բողոքական հայ ընտանիքների մէջ միշտ տիրապետում է հայերէն լեզուն։ Մինչև որ լուսաւորչական հայը մերժում է աւետարանը աշխարհաբար, կենդանի հայերէն լեզուով կարդալու անհրաժեշտութիւնը,—բողոքական հայը վաղուց է որ կարդում է Քրիստոսի խօսքը իրան հասկանալի, կենդանի, մայրենի աշխարհաբար լեզուով։ Մինչև որ հայ լուսաւորչականը իր աւելորդն էր տալիս յօգուտ Վանի սովատանջների, հայ բողոքականը իր վերջին կոպէկն էր տալիս նոյն նպատակին։ Մինչև որ հայ-բողոքականը միայն մի բան է ցանկանում, մի բան է խնդրում, որ նրան հանգիստ թողնեն դաւանել իր կրօնը և ազատ թողնեն իր մտքերը յայտնելու,—հայ-լուսաւորչականը ամենանաանողորմ կերպով հալածում է իր աւետարանական եղբօրը։ Հայ-աւետարանականները դեռ նորերումս անխնայ հալածանքներին ենթարկվեցան հայ-լուսաւորչականների կողմից՝ Էլէքսանդրապոլում, Էխայցխայում և Ղարսում։

Հայ լուսաւորչականների միջնադարեան մոլեռանդութիւնը այնտեղ է հասել, որ նրանք պիղծ են համարում ընդունել իրանց դպրոցներում հայ-բողոքական աշակերտին կամ ուսուցչին, պիղծ են համարում հայոց մի լրագրի մէջ հայ-բողոքականի յօդուածը կարդալու...

Ամբոխի այդ հրէշաւոր մոլեռանդութիւնից օգուտ են քաղում մեր թէ աշխարհական և թէ հոգևորական ժողովրդական առաջնորդները։ Հայ քահանան գրգռում է ամբոխի մոլեռանդութիւնը դէպի բողոքականները, նոյնը անում է և լուսաւորված լրագրապետը իր եսական նպատակների համար, չամաչելով շողոքորթել ժողովրդի մոլեռանդութեանը և վայրենի ինստինկտ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՂՈՎՏԻ ԿԻՆԸ

Ապրիլ ամսի մի օր Եաֆֆայից եկան Պալեստին երեք ճանապարհորդներ՝ միստրիս Ջոն Դիկսոն, սրա բարեկամ Ուիլիամ Ջէկման և երրորդը Դիկսոնի գեղեցիկ կինը, որի հետ պակվելուց անցել էր միայն կէս տարի։ Այս ճանապարհորդութեան գլխաւոր առաջնորդն էր Դիկսոնը, անգլիացի գլխից մինչև ոտները, օրինակելի բակենբարդներով, ապիտակ պարուսինայից շորերով։ Սաստիկ եռանդոտ սէրը, որ ունէր Դիկսոնը դէպի հնագիտութիւնը և հնագիտական հետազօտութիւնները, բերեց նրան Երուսաղէմի դռների մօտ։ Յայտնի չէ, թէ ինչ նպատակաւ էր ճանապարհորդակցում այն ուսումնականի հետ նրա ընկեր պճնասէր Ջէկմանը, որ բոլոր սրտից ծիծաղում էր իր բարեկամի կրքի վրա և ոչինչ հասկացողութիւն չունէր հնագիտութիւնից։ Յայտնի է միայն, որ երկուսը ևս եկան այստեղ երկրպագելու Ջոն Դիկսոնը զանազան պատմական հնութիւններին, իսկ գեղեցիկ Ջէկմանի երկրպագութեան առարկան ոչինչ չունէր ընդհանուր հնութիւնների հետ։ Հեռատես ընթերցողը ի հարկէ գուշակեց, որ այն մագնիսը, որ քաշում էր Ջէկմանին դէպի իր բարեկամը, Դիկսոնի Ջահել և գեղեցիկ կինն էր, որ սաստիկ սիրահարված էր իր ամուսնու վրա։ Ջահել միստրիս Դիկսոնը ոչ թէ միայն չէր գնահատում հնագիտական հետազօտութիւնները, բայց ատում էր նաև հնագիտութիւնը, ինչպէս իր վտանգաւոր հակառակորդին (саперница), և եթէ համաձայնվեց գնալ իր ամուսնի հետ Պալեստին, այս միայն այն պատճառով, որ չը կարողացաւ բաժանվել նրանից և վախենում էր յանձնել նրան իր հակառակորդին։ Իր ամուսնի ամեն մի նոր զմայլումն, երբ տեսնում էր զանազան աւերակներ և հին չինուածքներ, վհատեցնում էր միստրիս Դիկսոնին, իսկ միստեր Դիկսոնի ամեն մի ուշադրութիւնը դէպի ինքն, ամեն մի նրա ժպիտը նա ագահութեամբ էր ըմբռնում։

—Նայեցէք, ի սէր Աստուծոյ, նայեցէք, թէ ինչպիսի գեղեցկութիւն է, հիանում էր Դիկսոնը, ցոյց տալով իր ճանապարհորդակիցներին Երուսաղէմ քաղաքի պատը և մանրամասն բացատրելով նրանց այս չինուածքի նշանակութիւնը։ Բայց ճանապարհորդակիցները չը գիտէին գնահատել այս գեղեցկութիւնները։ Միստրիս Դիկսոնը միայն հոգոց հանեց, իսկ Ջէկմանը անտարբեր խաղում էր ձեռի փայտով իր կօշիկների հետ և ծիծաղելով այս և այն կողմն էր նայում միայն։

—Այո՛... Այո՛... այս իսկ տեղից ազնիւ և քաջ ասպետ Գոդֆրիդ Բուլիոնացին դիմեց անօրէն թշնամու վրա խլելու այս սրբատեղերը նրա լծխանութիւնից.... Ահա և Դաւիթի աշտարակը. ով Աստուած! ինչպէս հիանալի է նա.... Դու դիտես, հոգիս, այս աշտարակի մասին եղած աւանդութիւնը, դարձաւ նա դէպի կինը։ Այս իսկ աշտարակից Դաւիթը զմայլում էր Վերսավիի գեղեցկութիւնով, որ լողում էր Գեննոնեան հովտում, ահա այն կամուրջի աւերակների տակ։

Միստրիս Դիկսոնը նայեց դէպի այն կողմը, ուր ցոյց էր տալի ամուսինը, և երկմտաբար պատասխանեց.

—Դաւիթ արքայն ուրեմն շատ հեռատես պէտք է լինէր, եթէ կարողանում էր տեսնել այսքան հեռաւոր տեղից։

—Երևի նա բինոկլով էր նայում, ժպտալով ասեց Ջէկմանը։

Բարեբախտաբար հնագէտը չը լսեց այս հայհոյանքը, շատ խոր մտածելով Դաւիթ արքայի վրա։ Այս տարօրինակ հնագէտի հետ ես ծանօթացայ բրիտանական հիւպատոսարանում Սիօն սարի վրա։ Սրանք երեքը միասին եկան ինձ մօտ մի գանգատի մասին թարգման հրէայի կողմից, որ բերել էր Դիկսոնի վրա ծախելու հռոմէական մի շատ հաղուագիւտ փող, (Դիկսոնը պարապում էր և դրամագիտութեամբ (нумизматика), որը գտել էր իրը թէ քանդելով աւերակների տակ։ Հրէան գանգատվում էր, որ Դիկսոնը չէր կամենում վճարել այն գինը, որը նա պահանջում էր և երդվում էր Աբրահամի, Իսահակի և Յակոբի անուններով, որ նա չէ վերցնում փողի արժէքից առաւել։ Յայտնելով իր գանգատը, հրէան ձեռքերը դրած սրտի վրա, սաստիկ խոնարհեցնում էր գլուխը, որով նրա մազերը (пейсъ) մովսիսական օրէնքին համաձայն թողված, ծածանում էին այս և այն կողմը։

—Մի՞թէ դուք կարծում էք, որ այս փողը իսկականը չէ, հարցրեց ինձանից վրդովված Դիկսոնը երբ ես յայտնեցի նրան իմ կարծիքը։

—Ի՞նչպէս ասել ձեզ... Ծանրութիւնը իսկական է, բայց իսկական չէ նրանով, որ այս փողը ոչ թէ Հռոմումն է ձուլված երկու հազար տարի առաջ, այլ Փարիզում տաս տարի առաջ։

Խաբված Դիկսոնը մէկ ձեռքից միւս ձեռքն էր գցում շուռ տալով փողը, երբ միստրիս Դիկսոնը նայելով ինձ վրա, շնորհակալ եղաւ, որ ես նկատեցի նրա ամուսնի տգիտութիւնը հնագիտութեան մէջ։

***

Այս ժամանակից սկսվեց իմ ծանօթութիւնը Դիկսոնների և Ջէկմանի հետ։ Հնագէտը սիրում էր շուտ շուտ մտնել ինձ մօտ, որովհետև գտաւ իմ տանը շատ թանգագին քարացած նիւթեր։ Ջէկմանի և միստրիս Դիկսոնի հետ մենք խօսում էինք այնպիսի նիւթերի վրա, որոնք ոչինչ կապ չունէին հանքային ընութեան հետ։ Ինձ շատ հետաքրքրում էին այս երեք անձերը, ես դիտում էի նրանց յարաբերութիւնները, որոնցով նրանք կապված էին և շուտով որոշեցի նրանց շատ ճիշդ։ Ջէկմանի միտքը ես հասկացայ իսկոյն. նրա նրպատակները այնքան առերես էին, որ շատ դժուար էր սխալվել։ Միայն համեստ և քնքոյշ սիրող ամուսինը՝ միստրիս Դիկսոն, կարող էր չը տեսնել նրանց, զբաղված լինելով իր հնագիտական հիւանդութիւնով։ Այս կինը գրաւեց բոլոր իմ համակրութիւնը, և ես ամեն կերպիւ աշխատում էի, որ Դիկսոնի եռանդոտ կիրքը դէպի հնագիտութիւնը չափաւորելով, վերադարձնեմ նրան իր կնոջը։ Ամեն յաջող դիպուածում ես նրա առաջն էի դնում այս գիտութեան մեռելութիւնը և երկար վիճելով հնագիտութեան անշահաւէտ լինելու և շատ անգամ սխալների մասին, աշխատում էի դարձնել նրան դէպի կենդանի գործունէութեան ճանապարհը։ Բայց իմ կրիտիկական զրոյցները ոչ թէ միայն չը հասցրին նպատակին, այլ ընդհակառակ առաւել ևս վառեցին նրա եռանդը դէպի հնագիտութիւնը։

***

Մեր հնագէտը յանկարծ հեռացաւ Երուսաղէմից և չորս օր չէր երևում։ Խեղճ միստրիս Դիկսոնը բոլորովին ոչ մի ընկաւ, առաջ գնալով հանդիպելու նրան, բայց նա, ողորմելին, ուշք ևս չը դարձրեց սրա վրա։ Յետ դառնալուց յետոյ իսկոյն մտաւ ինձ մօտ և դրեց տեղանի վրա մի պարկ, գաղտնի նայելով բոլոր անկիւնները և դռները։

Նորա աչքերի փայլող հայեցուածքից և ուրախ ժպիտից ես հասկացայ, որ եռանդոտ հնագէտը նորութիւն է գտել և անհամբեր ցանկանում է խօսել նրանց վրա։ Փակելով բոլոր դռները, վրդովված մօտեցաւ նա ինձ և կնոջը, որ եկել էր միասին, խօսք առնելով մեզանից, որ ոչ ոքի չը յայտնենք նրա գաղտնիքը։ Մենք ապահովացրինք նրան։ Այն ժամանակ նա սկսեց հանդիսաւոր կերպիւ այսպէս. Ձեզ յայտնի է, ի հարկէ, որ Սոդոմ և Գոմորը Մեռեալ ծովի յատակումն են։ Այս անժիստելի է, բայց երկրաչափական դրութիւնը այս երկու անիծված քաղաքների յատ-

*) Այս փոքրիկ վէպը, որ առնված է ամերիկականից, տպված է «Иллюстрированный міръ» օրագրում № 21 1879 թ.։

ներին, հնարելով ամեն տեսակ հրէշաւոր յանցանքներ բողոքականների վերաբերութեամբ և ամենաստոր բամբասանքներ բարձելով աւետարանական հայերի վրա։

Ի՞նչ զանազանութիւն կայ Կ. Պոլսի թիւրք մոլեռանդ լրագրութեան և հայ լրագրութեան մէջ.... Ոչինչ։ Երկուսն էլ մի և նոյն շաւղին են հետևում։ Առաջինը ամենաստոր միջոցներով գրգռում է մահմեդականի հրէշաւոր ֆանատիկոսութիւնը քրիստոնեայի դէմ, երկրորդը ամենազզվելի միջոցներով գրգռում է հայ-լուսաւորչական ամբոխի հրէշաւոր ֆանատիկոսութիւնը հայ-բողոքականի, կամ հայ-կաթոլիկի դէմ....

Վերջապէս Կ. Պոլսի հայերի մի մասը և նրանց հոգևոր առաջնորդ Ներսէս սրբազանը հասկացան որ այդ տեսակ կորստաբեր ճանապարհով ընթանալով, ազգը կը հասնի դէպի անդունդ։

Ու ճշմարիտ զարմանալի տեսարան է ներկայանում մեր աչքերին։ Թիւրքիայի հայերը մի կողմից պահանջում են Եւրոպայից ինքնավարութիւն իրանց համար, իսկ միւս կողմից շարունակում են անխնայ հալածել իրանց այլադաւան եղբայրներին։

Ասացէք, խնդրեմ, կասէինք մենք նրանց, դուք երևի Եւրոպային յիմարի տեղ էք դնում, ով կը տայ ձեզ ինքնավարութիւն երբ դուք դեռ բարոյապէս և մտաւորապէս այնքան չէք զարգացել, որ դադարէիք ձեր այլակրոն եղբայրների դէմ ամենահրէշաւոր հալածանքները։ Մի՞թէ մի ազգ արժանի է ինքնավարութեան, կամ ընդունակ է ինքնավարութիւն ունենալ, երբ նա իր համաքաղաքացիների մի մասը անդադար կը հալածի, միայն այն պատճառով որ այդ մասը ուրիշ եկեղեցուն է պատկանում, իր այդ քաղաքացիներին, իր հաւատարիմ և բուն հայ հայրենակիցներին պիղծ կը համարի միայն այն պատճառով, որ սրանք ուրիշ կերպ են աղօթում Աստուծուն, քան թէ մեծամասնութիւնը։

Պարզ է որ այդ տեսակ վայրենի, քաղաքակրթական կեանքին դեռ ևս անընդունակ, մոլեռանդ, խաւար ազգին Եւրոպան երբէք չի տայ ինքնավարութիւն, որովհետև այն ժամանակ ոչինչ զանազանութիւն չի լինի՝ արդեօք թիւրքիան կենտրոնից կը շարունակի կառավարել Հայաստանը, թէ հայերը ինքնավարութիւն կունենան։ Երկուսն էլ, ուրեմն, թէ թիւրքը և թէ հայը, անարժան են մարդավայել, հասարակական, քաղաքական կեանքին։ Ինչպէս որ թիւրքը այժմ անողորմ կերպով հալածում է քրիստոնեաներին և բռնի կերպով դարձնում է նրանց դէպի մահմեդականութիւնը, նոյնպէս և հայը, երբ ինքնավարութիւն կունենայ, անողորմ կերպով կը հալածի հայ-բողոքականին և հայ-կաթոլիկին և երբ այժ կունենայ, բռնի կերպով կաշխատի դարձնել նրանց լուսաւորչական կրօնին։ Ի՞նչով ուրեմն թիւրքաց հայերը բարձր կը լինեն նոյն իսկ թիւրքերից։ Երկուսն էլ նոյնչափ մոլեռանդ են, երկուսն էլ նոյնչափ անընդունակ են ինքնուրոյն քաղաքական կեանքին։

Ներսէսը հասկացաւ այս և առաջին քայլն արաւ դէպի հաշտութիւնը։

Երբ ինքն ժողովուրդը տգէտ ու մոլեռանդ է,—այդ հասկանալի է։

Բայց ամէն ժողովրդական այն առաջնորդներին, ամէն այն լրագրութեանը, որոնք ամեն ջանք են գործ դնում որքան հնար է երկար ժամանակ պահպանել ամբոխը տգիտութեան և մոլեռանդութեան մէջ, որքան հնար է երկար ժամանակ մոլորեցնել նրան և գրգռել նրա ամենաստոր զգացմունքները, այդպիսով անընդունակ դարձնելով նրան ապագայ ինքնուրոյն հասարակական կեանքին։

Սարսափելի տեսարան.... Ժողովրդական առաջնորդները՝ հոգևորականներն ու աշխարհականները, քահանաներն ու լրագրապետները թմրեցնող թոյն են խմացնում ժողովրդին, հաւատացնելով նրան որ դա մի փրկարար դեղ է։ Ու յետոյ իրանց սրտում ծաղրում են ժողովուրդը։ «Քանի որ նա կը թմրի, կը հարբի մոլեռանդութեան և տգիտութեան մէջ, ասում են նրանք, այնքան մեզ օգուտ է, այնքան մեր ծուխը եկամուտ կը տայ, այնքան էլ ուշ կարթնանայ տխմար ամբոխը։»

Ահա ինչպէս են վարվում ձեր առաջնորդները ձեզ հետ։

Նա, որ քարոզում է եղբայրասիրութիւն, համբերողութիւն, մտքի և հաւատի ազատութիւն,—նա կամենում է որ ժողովուրդը արթնանայ։ Բայց նա, որ քարոզում է մոլեռանդութիւն, ատելութիւն դէպի իր եղբայրը,—նա կամենում է որ ժողովուրդը միշտ տգէտ, մոլեռանդ և խաւար մնայ։

Մի ժամանակ ժողովուրդը կը հասկանայ իր նենգաւոր առաջնորդների յանցաւոր դիտաւորութիւնը։ Բայց այն ժամանակ կարելի է ուշ կը լինի արդէն....

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՐԱՒԷՐ

—

Թիւրքիայից գրած նամակներից երևում է, որ Հայաստանում—հայերի մէջ, դեռ ևս շարունակվում են անտանելի թշուառութիւններ—սով, հիւանդութիւն, աղքատութիւն, գաղթականութիւն և այլն (տես «Մշակի» 99-դ և 100-դ համարներում Վանից գրված

կապէս որոշված չէ մինչև այսօր... իսկ ես... ես կը գտնեմ ուղիղ և չշափելի ապացոյցը, որ Սոդոմ և Գոմորը իսկապէս գտնվում են Մեռեալ ծովի տակը, ասեց նա մի այնպիսի վստահ ձայնով, որ կարծես թէ այս ապացոյցը նրա ձեռքումն էր արդէն։

—Ուրեմն ես վաղորդայն չնորհաւորում եմ ձեզ բոլոր ակադեմիաների և բոլոր ուսումնական ընկերութիւնների պատուելի անդամի կոչումով, ասեցի ես։

—Այո, իմ գիւտը բոլոր աշխարհում չունի իր հաւասարը։

—Ինչումն է բանը, հետաքրքրվեց կինը։

—Ես գտայ փողոցը...լսում էք դուք թէ չէ, Սոդոմի կամ Գոմորի փողոցը, ասեց Դիկսոնը, ձեռքնելով իրան ուսումնական։ Այս փողոցը դուրս է գալի Մեռեալ ծովի խորշից (ложбина) և 9 ֆունտ լայնութիւն ունի։

Ինչ ապացոյցներ ունէք դրա համար։

—Ապացոյցներ...ահա ձեզ, հանդիսաւոր կերպիւ ասեց նա, հանելով պարկից և դնելով սեղանի վրա զանազան տափարակ և քառանկիւնի քարի կտորներ։ Բայց եթէ ցանկանում էք առաւել ևս ապացոյցներ, ես առաջարկում եմ ձեզ գնալ ինձ հետ գիւտի տեղը, այնտեղ դուք ինքներդ կը տեսնէք, որ...Բայց չէ, մի քանի ժամանակ դեռ ևս չեմ յայտնի ձեզ այս ամենաթանդագին դաղտնիքը։ Գնանք, գնանք այնտեղ, և դուք կը տեսնէք ինքներդ։

Դիկսոնի երեսը փայլում էր այնպիսի մի սրևորութեամբ, որ նա, կարծես, պատրաստ էր իսկոյն կրկին գնալ Մեռեալ ծովի մօտ, այնպէս որ կնոջը հազիւ յաջողվեց յորդորել նրան սպառելու մինչև միւս առաւօտ։

Լսելով, որ միտրին Դիկսոնը նոյնպէս մասնակցում է հնագէտ ամուսնու երկրորդ անգամվայ էկսկուրսիային, Ջէկմանը ցանկացաւ նոյնպէս գալ մեզ հետ և միւս օրը մենք չորս ճանապարհ ընկանք։

***

Երկու ժամ ծանր ճանապարհից յետոյ օթեվանին արեգակի ճառագայթների տակ, որ սաստիկ այրում էր մեզ այս տխուր և ճանձրալի ամայի տեղում, մենք վերջապէս զգացինք Մեռեալ ծովի ափերի մօտիկութիւնը, որտեղից փչում էր կենդանացուցիչ հովը։

Մեռեալ ծովը իսկապէս համապատասխանում է իր անուանը. նրա վրա չէր երևում կեանքի մի որ և է նշան։ Բոլոր օրգանական կեանքը մեռած էր. ոչ մի կենդանի արարած, ոչ մի նաւ, ոչ մի առագաստ, ոչ մի ծուն մօտում։ Ծովը իր ադի ջրերը տարածում էր ահագին մակերևոյթի վրա, վախենալով նաև շարժվել ալիքներով, որոնք հազիւ հազ չչնչում էին ափերի քարերի հետ։ Մենք դժուարութեամբ էինք շարժում ոտները տօթից և յոգնելուց։ Ամենքի երեսի վրա տխրութիւն էր ձգում մեռեալ ծովի տեսքը։ Միայն քաջ Դիկսոնը չէր յոգնում և համարձակ առաջ էր քայլում։ Մինչև այն փողոցը, որը նա գտել էր, մնում էր մի ժամվայ ճանապարհ ևս, և մենք վերջապէս ուժաթափ եղանք և չէինք կարողանում հետևել նրան։ Ես առաջարկեցի հանգստանալ վրանի տակ, որտեղ մեծ վայելչութիւն պատճառեց մեզ հանդիսաւոր Դիկսոնը միայն չէր նստում իր տեղը և անդադար դուրս էր փախչում վրանից և հետազօտում զանազան աղայլն կոյտեր, որոնցով ծածկված էր ծովեզերը։

***

Նոյն երեկոյին ինձ յաջողվեց, բոլորովին պատահմամբ, մի գիւտ անել, որ առաւել ևս երևելի էր, քան թէ Դիկսոնի փողոցը։ Մենք նրա հետ դուրս եկանք մանգալու ծովի ափը, բայց ես չուտով ձանձրացայ, և թողնելով նրան զմայլվել ծովի տեսարանով, յետ դարձայ իմ վրանը, որտեղ պառկեցի փոքր ինչ թմրելու։ Շուտով լսեցի, որ ինձանից չատ մօտ կատարվում էր Եւայի օձից խաբվելու տեսարանը։

—Մտածեցէք միայն, թէ ինչ է սպասում ձեզ ապագայում, չչնչում էր Ջէկմանը։ Ես չատ ցաւում եմ ձեզ վրա։ Ձեր խելագար ամուսինը մտածում է միայն ընկնել ծաղրալի ցնորքների ետևից, այն բանի, որ համարձակվում է անուանել գիտութիւն։ Նորա սիրտը ծածկված է միչտ քնքոյշ սէրի զգացմունքի համար. նա չէ հասկանայ ձեզ երբէք, չի գնահատի ձեզ, որ և իցէ մի հնագիտական քանդուածի կտորը նա առաւել ևս թանգ է դասում ձեզանից, նա նրանով զմայլվում է, ուսումնասիրում է նրան, գնահատում է, բայց ձեզ բոլորովին մոռանում է, չէ զգում ձեր ներկայութիւնը, չէ տեսնում, չէ լսում ձեզ...ձեզ, որ արժանի էք սէրի.... Ասացէք այժմ, մի՞թէ կարելի է անտարբեր նայել այս ամենի վրա, մի՞թէ կարելի է չը վրդովվել, մանաւանդ ինձ, որ այդքան պաշտում եմ ձեզ... Ինձանում խօսում է ոչ թէ եսական զգացմունքը, ոչ... Ես ցանկանում եմ միայն սփոթել ձեր փչոտ ճանապարհը վարդերով, ծածկել վայելչութիւններով այն տխուր անապատը, որի վրա դուք գտնվում էք։ Նորա չոր սիրտը չէ գնահատում այն գոհարները, որոնց դուք ընծայում էք նրան, իսկ ես... ես հասկանում եմ ամեն մի ձեր հայացքը, ամեն մի ձեր մկանունքների շարժումը։ Ինձ տանջում է այն միտքը, որ նա մի քանի տարից յետոյ և ձեզ կը դարձնի մի քարեղէն էակ, չը թոյլ տալով ծաղկելու այն չքեղ վարդերին, որոնք ծածկված են ձեզանում։

Ես չէի ցաւի ձեզ վրա, եթէ գիտենայի, որ դուք փոքր ինչ համակրում էք ձեր ամուսնուն նրա հնագիտութեան կրքի հետ, բայց այս չեմ տեսնում ես, ձեր հակումները բոլորովին տարբեր են, ձեր զգացմունքները, ձեր խելքը բոլորովին չեն համապատասխանում նրան, դուք չատ բան ունէք ընդհանուր ինձ հետ։ Մենք կարող էինք բախտաւոր լինել, մեր կեանքը կը տար մեզ անթիւ վայելչութիւններ, զմայլումներ և բախտ...

—Դադարեցէք, բաւական է...Ես ինձ թոյլ տուի չատ երկար լսել ձեզ, ասեց քաղցրաձայն միստեր Դիկսոնը։

Մի վայրկեանից յետոյ ես լսեցի չորերի չչնչիւնը, հասկացայ որ նա հեռացաւ խարեբայից։ Ես հետաքրքրվեցի նայել Ջէկմանի վրա, վեր քաշելով վրանի ծայրը, ես տեսայ, որ նրա վրա սփռված էր արևելեան լուսնի պայծառ լոյսը։ Նա հպարտ յետ գցեց գլուխը և վառեց սիղարը չատ վրդոված։ Շուտով եկաւ միստեր Դիկսոնը։ Լուսինը ներշնչել էր նրան չատ համարձակ մտքեր։ Ես լսեցի ինչպէս նա բացատրում էր իր բարեկամին Մեռեալ ծովից ջրանցքներ անցկացնելու պրոյեկտը։

—Մեր ժամանակում, սիրելի Ջէկման, ոչինչ չը կայ անկարելի, ոչինչ հրաշալի։

Հօլանդիայում չէիր, որ Զիւդերզէից ողջ ջուրը դուրս հանեցին։ Բայց նա չատ պակաս չէր Մեռեալ ծովից։ Ուրեմն ինչի չը դուրս հանել Մեռեալ ծովից ողջ ջուրը։ Բայց ոչ... առաւել չահաւէտ է, իմ կարծիքով, ջրանցքներ անցկացնել նրանից։ Միջերկրական ծովի հետ անկարելի է... մակերևոյթը զանազան է, բայց կարմիր ծովի հետ չատ դեղեցիկ. նա մի քանի ֆուտով ցած է Մեռեալ ծովից։ Հէ... ինչ կասէք, իմ սիրելի բարեկամ, իմ պրոյեկտի մասին։

Ջէկմանը համաձայնվեց միայն նրա համար, որ ազատվի գոնեա ճանճրացուցիչ հնագէտից։

—Դուք կը տեսնէք, երբ կը հեռացնենք ջուրը, որքան զանձեր կը գտնենք այս խորհրդաւոր ծովի յատակում։ Կարելի է, որ կը գտնենք Ղոտի բնակարանի հետքերը։ Նայելով մի քանի հանգամանքներին, նա գտնվում էր ոչ չատ հեռու Սոդոմ քաղաքի դռներից։

Ջէկմանին վերջապէս ճանճրացրին հնագէտի ցնորքները, և ասելով, որ յոգնած է, չուտ գնաց քնելու։

(Կը շարունակվի)

նամակները, և մանաւանդ Գ. Արծրունու առաջնորդող յօդուածը: «Դեռ պէտք է շարունակել» վերնագրով, նոյն 100-դ համարում):

Ժողովուրդը անաւուններ չունի գետին վարելու. ոմանք կոտորվել են ձմերային սառնամանիքից, և ոմանց ծախել է կամ կերել. սերմացու ցորեն չունի ցանելու, և ո՛չ փող իր հարկաւոր պիտոյքները լցուցանելու. մանաւանդ ոմանք մեծ էլ շատ քիչ փող է գտնվում, և դժբաղդաբար նուիրատուութիւններն էլ քչացան և համարեա վերջանալու վրա են: Ուրեմն ի՞նչ անէ թշուառ հայն. նա իր յոյսը դրել է մեր Ռուսաստանի հայերի վրա. նա իր արտասուալից աչքերով մեզ է նայում և ասում է. «Իմ սիրելի Ռուսաստանցի եղբայրներ, ինձ շատ բարերարութիւններ արեցիք, իմ կեանքը դուք ազատեցիք սովից (թէև շատերը սովամահ եղան), և ձմերային սառնամանիքից հասցրիք մինչև այսօրվայ ամարային, բնութեան զեղեցիկ օրերը: Այսօր բնութիւնը հաշտվել է ինձ հետ. ձիւնը վերացրել է դաշտերից, ցանքի ժամանակ է, իսկ ես ո՛չ անաւուններ ունեմ գետին վարելու, ոչ սերմ ունեմ ցանելու, և ոչ փող, իմ հարկաւոր պիտոյքները լցուցանելու. ուրեմն խնդրում եմ ձեզ, սիրելի եղբայրներս, գոնէ այս ամառ օգնեցէք ինձ, որպէս զի ապագայում, էլ ձեզ նեղութիւն չը պատճառեմ, և ինձ համար կարողանամ մի կոտոր հաց գտնել. իմ պիտոյքներ լրացրէք դուք, և ես ձեր արած բարերարութիւնները բիւրապատիկ կը վերադարձնեմ ձեզ: Ես երբէք չեմ մոռանայ ձեր արած բարերարութիւնները: Ես պահպան եմ Հայաստանի—այն երկրի, որի սիրոյ համար դարերի ընթացքում կրում եմ ամենայնքները, և որին լարված նայում է մի քանի միլիոնաւոր հայ ազգը: Ես պահպան եմ մեր նախնեաց գերեզմանների և այն անձանց սուրբ ոսկերքների, որոնց օրինակին հետևելով չեմ կարողանում թողնել և ուրիշին յանձնել իմ նուիրական հայրենիքը, մինչև անգամ այսպիսի ճգնաժամերիս մէջ: Ես հսկում եմ մեր ազգային այն աւերակների և յիշատակների վրա, որոնց եկող տարի հնագիտական ժողովում պէտք է բարձրանայ և փայլէ հայութեան անունը և պատիւը գիտական աշխարհի առաջ: Բարբարոսի լծի տակ տանջվումեմ, և նրա սրի տակ թափում եմ իմ արիւնը հայրենեաց հողի վրա, բայց դարձեալ չեմ կարողանում հեռանալ. դարձեալ պէտք է պահպանեմ հայութեան հայրենիքը: Ես իմ գերեզմանը ընտրել եմ այն հողի վրա, ուր եղել է հայութեան նախնի օրորոցը»:

Ահա, ամեն դաւանութեանց պատկանող սիրելի՛ հայեր, այսպիսի սրտամորմոք խօսքերով դիմում է մեզ Հայաստանցի հայը, և օգնութիւն է խնդրում.... ի՞նչ պատասխանենք, կամ ի՞նչ անենք...:—Դիմենք էջմիածնին և խեղճ հայի թարգման դառնանք նրա առաջ. յայտնենք նրան սրա ցաւալի դրութիւնը.... բայց ի՞նչ իրաւունքով, երբ Հայաստանցի հայը ասում է: «Ես այլ ևս չեմ կարող յուսալ էջմիածնից. նա ինձ այն օգնութիւնը չարաւ, ինչ որ կարող էր և ինչ որ պարտաւոր էր անել. նա իմ արիւնախառն քրտինքով է ապրում... և իմ քրտնաշխատ լումաներով լցված գանձարանը, և իմ աշխատասէր ձեռքերով լցված ամբարները փակել է այսօր իմ առաջ. նա զլանում է այսօր ինձ մի կոտոր հաց տալ, կինս և որդիքս սովից կոտորվում են.... Ես այսուհետև էլ չեմ կարող այնքան հաւատ ընծայել էջմիածնին: Նա մեզ քարոզում է, թէ նեղացածներին օգնեցէք, իսկ ինքը այսօր, ինձ, հացի տեղ քար է տալիս և ձկան տեղ օձ: Այսուհետև իմ գրպանը փակված կը մնայ և իմ աշխատասէր ձեռքերը դադարած էջմիածնի համար, եթէ, գոնէ այս ճգնաժամիս մէջ իր օգնութեան ձեռքը չի կարկառի դէպի ինձ: Ես այսուհետև լաւ եմ ճանաչում իմ բարի ու վատ կամեցողներին: Ի սէր Աստուծոյ, ի սէր հայրենեաց, ի սէր ազգի, և գոնէ ի սէր անձի, էլ այժ չունեմ խօսելու, մի կտոր հաց...» Ահա՛ մի գաղափար, որ ստացել է նեղացած հայը այս ճգնաժամիս մէջ, էջմիածնի վերաբերութեամբ:

Գոնէ այժմ հասկանայ էջմիածինը իր պարտաւորութիւնները, և օգնութեան ձեռք կարկառի սովատանջ հային. նա եթէ կամենայ աւելի հեշտութեամբ կարող է օգնել նրան, քան թէ մի ուրիշ որ և է անձ: Բաւական է որքան մնաց անուշադիր... այժմ ժամանակ է գործելու. ընդհանուր հայութիւնը վտանգի է ենթարկած. եթէ չի օգնի, կը վնասվի, նրա գանձարանը և ամբարները շուտով կը դատարկվեն, և ո՞վ պէտք է լցնի, եթէ ոչ այժմեան նեղացած հայը, որը կարօտ է այսօր իր քրտինքով պահված էջմիածնի օգնութեանը:

Եթէ ազգի այս ներկայ ճգնաժամիս մէջ էլ անուշադիր մնաց էջմիածինը, նա թող այլ ևս չը կարողանայ այսուհետև իր համար ժողովրդից մի որ և է օգնութիւն խնդրելու:

Մի հայ լրագիր—«Մշակը» ազգի այս ներկայ ճգնաժամիս մէջ, կարողացաւ և կարողանում է անել այն, որը տարիների ընթացքում չէ կարող անգամ երազել էջմիածինը, եթէ այսպէս շարունակի: «Մշակը» հայութեան մութը հորիզոնի վրա կարողանում է ցոլացնել այն լոյսը, որը էջմիածինը չէ կարող անգամ իր երևակայութեան մէջ պատկերացնել, իր այսպիսի թմրալից շարժումով: Միով բանիւ, «Մշակը» գործում է այն, ինչ որ պէտք է գործէր էջմիածինը, բայց չէ գործում. և մենք խորհուրդ կը տանք էջմիածնին, իբրև նրա բարի կամեցող, որ շուտով իր ուշադրութիւնը դարձնէ հայութեան ներկայ վիճակի վրա, և գործ դնէ օգնութեան միջոցներ, որոնց յետաձգելը վատ հետևանքներ կարող են բերել նոյն իսկ իրան, և հայութիւնը այլ ևս չի նայի նորան այնպէս, ինչպէս նայել է մինչև այսօր: «Զօգուտն ձեր դուք գիտէք»: Թողնենք էջմիածինը իր խղճի դատողութեանը, և դառնանք դէպի մեզ, աշխարհականներս, որոնց վրա իր վերջին յոյսը դրել է Հայաստանցի հայը:

Խնդրում ենք ձեզ և աղաչում... ո՞վ ամեն դաւանութեանց պատկանող հայեր, եկէ՛ք միանանք, օգնենք մեր եղբայրակից հային, որի կեանքը թանգ արժէ մեր ընդհանրութեան համար...

Օգնե՛նք նեղացած հային, որպէս զի գոնէ օրինակ վերցնի մեզանից էջմիածինը: Ամեն դաւանութեանց պատկանող սիրելի հայե՛ր, հարկաւոր է ազգային ընդհանուր միութիւն. հարկաւոր է օգնութիւն միացեալ ոյժերով: Սիրելի՛ հայեր, ծերեր և երիտասարդներ, պատանիներ և մանուկներ, տիկիններ և օրիորդներ հայութիւնը մօտ է գլորման, շտապենք վերականգնելու. Հայաստանի հորիզոնը ծածկվել է խաւարով, շտապե՛նք լուսաւորելու: Հայութիւնը մօտ է կորստին և նրա փրկարար գանձանակը բաց է «Մշակի» առաջ, շտապենք մեր նուէրները ձգելու...:

Ահա՛ մի ընդարձակ ասպարէզ, որով կարող են ցոյց տալ ամեն դաւանութեան պատկանող հայերը իրանց ազգային միութիւնը. ահա՛ մի հաստատուն միջոց, որով կարող ենք ցոյց տալ մենք բոլոր հայերին, որ թէպէտ հեռացած ենք եղել մեր հայրենիքից, բայց երբէք չենք մոռացել մեր նուիրական աշխարհը և մեր թշուառ հայաստանցի եղբօրը: Վերջապէս հարկաւոր են հաստատուն միջոցներ, որոնցով կարող ենք ազատել ընդհանուր հայութիւնը այն անտանելի թշուառութիւններից, որոնք հետևանք են սկզբում մեր անուշադիր լինելուն:

Կոռնոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ գրում են ՇՈՒԼԱՎԵՐԻՑ, որ երկու ամիս սրանից առաջ մի անիրաւ մարդ խանչալով խփելով նոյն գիւղի երիտասարդ եղիշէ քահանային, ըսպանել է նրան: Հաւատացում են որ այդ սպանութեան պատճառը եղել է մի հակառակութիւն սպանողի և քահանայի մէջ, գլխաւորապէս դպրոցի առթով:

—

Մեզ գրում են ԿՕԴԻ գիւղից որ այդտեղ կայ 250 հայ ընտանիք, որոնք ունեն երկու քահանայ և մի փոքրիկ եկեղեցի, բայց չը նայելով հայերի այսքան բազմութեան, ոչ մի դպրոց չունեն: Ժողովուրդը պատրաստ է տարեկան մինչև 1000 ռուբլի տալ որպէս զի մի փոքրիկ դպրոց ունենայ, բայց սպասում է թեմական տեսչին, որ այցելէ գիւղը և այդ մասին կարգադրութիւն անէ. թեմական տեսչի երեսը Կօղի գիւղում, որ Թիֆլիսից շատ մօտ է, դեռ այդ գիւղի բնակիչներից ոչ ոք չէ տեսել:

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են որ յունիսի 5-ին և 6-ին կատարվեցաւ տեղի երկսեռ դպրոցների մէջ աշակերտուհիների հարցաքննութիւնը: Թղթակիցը ասում է որ հարցաքննութիւնները շատ անբաւականացուցիչ էին: Ներկայ էին թեմական տեսուչը և քաղաքի առաջնորդի փոխանորդը: Աշակերտ տղաների և աղջիկների թուլութիւնը վերաբերում են հոգաբարձուների և ժողովրդի անտարբերութեանը դէպի դպրոցական գործը:

—

Լսում ենք որ ԹԻՖԼԻՍԻ հայ հոգևորականները առհասարակ, շատ անխիղճ կերպով են վարվում իրանց ստորադրեալների հետ: Օրինակ սուրբ Սարգիս եկեղեցում նորերումս նոյն տեղի քահանան մի աններելի սխալ գործեց կիրակի երեկոյեան ժամերգութեան ժամանակ: Ցիրացուն կամեցաւ, որքան հնար է, ժողովրդին անտես կերպով ուղղել սխալը, բայց քահանան փոխանակ շնորհակալ լինելու, բողոքեց տեղիս վանահայր-վարդապետին յիշեալ տիրացուից, զանազան բամբասանքներ նրա մասին հնարելով: Բացի սորանից նոյն եկեղեցու քահանաները «քառասունք» կոչված արդիւնքը վաղուց հաւաքել են, իսկ տիրացուներին մինչև այժմ ոչինչ կանոնաւոր մաս չեն տալիս այդ նշանաւոր գումարից: Տիրացուները, սիրտ կոտրված եկեղեցի էլ չեն յաճախում:

—

Մեզ խնդրում են յայտնել որ Արծրունու գալէրէյում գտնված պ. Ալէքսանդր Շանչեանի «Տեխնիկական բիւրոյի» մէջ ընդունում են պատուէրներ նախահաշիւներ և յատակագիծներ կազմելու, նոյնպէս ֆաբրիկաների և գործարանների կառուցման պատուէրները ամենանոր և կատարելագործված ձևերով: Բիւրոն բերել է տալիս մեքենաներ և կանգնեցնում է նրանց, նոյնպէս յանձն է առնում Ռուսաստանից և արտասահմանից վարպետներ բերել տալու:

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ, պ. Ալան Նալբանդեան ուղարկել է մեզ մի նամակ, որի մէջ յայտնում է թէ «Մշակի» 88, 96 և 97 համարներում տպված պ. Ս. Մ.-ի «Շերամապահութեան մասին» յօդուածները հեղինակը ամբողջութեամբ թարգմանել է Իվերսէնի գրքից «Какъ добывать шелкъ» В. Э. Иверсенъ. Նամակագիրը յանդիմանում է Ս. Մ.-ին, որ սա չէ յիշում իր յօդուածի մէջ, թէ ինչ աղբիւրից է քաղել իր յօդուածների բոլոր նիւթերը: Պարոնը մի առ մի բերում է իր նամակի մէջ ռուս բառերից այլ և այլ տեղեր և համեմատում է նրանց հայոց թարգմանութեան հետ: Վերջը նամակագիրը խորհուրդ է տալիս «Հայերէն գրքերի հրատարակութեան Թիֆլիսի ընկերութեանը», որ սա թարգմանել տայ Իվերսէնի գիրքը հասարակ և հասկանալի հայերէն լեզուով և ապա տարածի այդ գիրքը Նուխու, Ղարաբաղի, Երևանի և Անդրկովկասեան այլ դաւառներ, որտեղ հայերը շերամապահութեամբ են պարապում:

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են, որ այդտեղ եղանակը այժմ փոփոխական է լինում: Գլխաւորապէս կէսօրին սաստիկ շղթեր է անում:

—

Մեզ գրում են հետևեալը: «Այս օրերս թեմական վերատեսչի օգնականը եկաւ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆ և ընտրել տուեց մեր դպրոցի համար նոր հոգաբարձուներին և նրանց կանդիդատներին: Ընտրվեցան Աբգար Օրբելի, Արտէմ Սարուխանբէկեան, Մկրտիչ քահանայ Տէր-Սարգսեանց, Բաղալ Մելիք-Էյնաթեանց, Ալէքսանդր Տէր-Գասպարեանց և Կոստան Օհանեանց: Յոյս ունենք որ այդ նոր հոգաբարձուները չեն նմանվի իրանց անփոյթութեան կողմից հին հոգաբարձուներին:»

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են հետևեալ տեղեկութիւնները: «Մեր քաղաքի լապտերները բոլորովին չեն լուսաւորում և ժողովուրդը գիշերներով ստիպված է մթնով շրջել: Քաղաքիս մի քանի տեղերում անձրևի ջուրը ճանապարհ չունենալով, հաւաքվում է, կազմում է լճակներ, որոնք այդ չոքերին վարակում են օդը, սարսափելի գարշահոտութիւններ արձակելով փողոցներում: Այդ տեսակ անուշահոտ լճակներից մէկն էլ գտնվում է նոյն իսկ քաղաքային այգու և փօստատան մօտ, ուրեմն քաղաքիս ամենակենտրոնական տեղում: Եւ դորա մասին հոգացող բնաւ չը կայ:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Բէյտերի» ընկերութեանը հաղորդում են Կ. Պոլսից յունիսի 30-ից հետևեալը. «Մինիստրների խորհուրդը այսօր քննում էր դեսպանների ընդհանուր գրութեան երրորդ կէտը, Հայաստանի վերաբերութեամբ: Կարծում են, որ թիւրքաց մինիստրները մտադիր են ամբողջ երկրի համար իրագործել եւրոպական մասնաժողովից քննված նահանգական կանոնադրութիւնը և այդ պատճառով երևի Հայաստանի համար առանձին կանոնադրութիւն չի մտցվի: Սպասում են, որ մինիստրները այսպիսի մի պատասխանի նախագիծ կառաջարկեն սուլթանին հաստատելու համար: Արտաքին գործերի մինիստր Արեդդին փաշայից առաջարկած Հայաստանի մէջ մտցնելի վերանորոգութիւնների նախագծի քննութիւնը յետաձգված է:

—«Polit. Corresp.» լրագրին գրում են, որ այժմ Նօվօբազարը անուանի ալբանցիների իշխանութեան տակ է: Քաղաքը այնու ամենայնիւ հանգիստ է:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յուլիսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ Կիեվի համալսարանի Բունդէ պրոֆէսորը նշանակված է Ֆինանսների մինիստրի օգնական:

ՓԱՐԻԶ, 2 յուլիսի: Այսօր կատարվեցաւ նոր դրօշակներ բաժանելու հանդէսը: Թէ ցերեկով և թէ երեկոյեան կարգ էր տիրում:

ԲԱԳՈՒՅԱ, 2 յուլիսի: Ալբանցիները յարձակվեցան չէրնոգորցիների զօրքի վրա Տուզայի մօտ: Չէրնոգորցիները ստիպվեցան յետ քաշվել և կորցրին մի քանի սպանված մարդիկ: Չէրնոգորիայի իշխանը հրամայեց իր զօրքին, որքան հնար է պաշտպանողական դիրքը բռնել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յուլիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 25 կ., երկրորդ 92 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., ներքին առաջին 5% փոխանառութեան տոմսակը արժէ 224 ր. 25 կ. երկրորդ 222 ր. 75 կ., արևելեան առաջին 91 ր. 50 կ., երկրորդ 91 ր. 25 կ., երրորդ 91 ր.25 կ., ոսկի 7 ր. 74 կ.: Ռուսաց մի բուբլ Լոնդոնի վրա արժէ 25,27 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 217 մարկ, 50 պֆ., Փարիզի վրա 268 ֆր. 25 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПО СЛУЧАЮ СЪѢЗДА ВОВСЕ СЪ КАВКАЗА ЗА-ГРАНИЦУ

Капитанъ князь Константинъ Макаровичъ Орбеліани объявляетъ, что продаетъ оставшееся послѣ смерти отца, Макарія Орбеліани, имущество, именно: трехъэтажный домъ на Головинскомъ проспектѣ, съ флигелями, гдѣ помѣщается гостинница «Россія», и имѣнія въ Тифлисской губерніи и уѣздѣ, именно: деревня Геуары, населенная жителями, 4,174 десят., Вашлеванъ—450 десятинъ, съ садами, домомъ и пристройками; дача въ Коджорахъ, домъ и земля $2\frac{3}{4}$ десятины; лѣсъ сосновый, строевой и дубовый 3,100 десят. въ Локскомъ ущельи, Шулаверскаго уѣзда, около Чатахскаго завода; имѣніе на Мокрыхъ-горахъ, около молоканскаго селенія Воронцовки, подъ названіемъ Каракала—5,500 десят. Всѣ имѣнія обмежеваны и имѣются планы; коляска, фаэтонъ, верховыя лошади, баранта и рогатый скотъ.

3—3

ՄՕԶԴՕՔԻ

Հայոց օրիորդաց դպրոցի համար պահանջվում է մի վարժուհի նպաստաւոր պայմաններով: Ցանկացողները կարող են դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը պայմանների մասին բանակցելու համար:

8—10

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օլէօգրաֆիական պատկերներ 20% զիջումով. վերարկուներ 6—20 ր., խոզանակներ պաշենֆուրված են լգի մէջ առանձնապէս անգլիական խանութի համար, ամենալաւ ածելիներ, արկղիկով 4 ր., շենֆիլդի դանակներ 3—20 ր. դիւժինը, բրիտանական մետալի թէյամաններ 30 կ.,—3 ր., գիտրատամզնեղիա, թիւրքական շերբէթ և ծարաւը բազեցնող նիւթ 70 կ., ամենալաւ պորտվէյն և խերես 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը:

20—20

Համեմատեցէք անգլիական խանութի թէյին գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը 2 բուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

27—100



Իր յատկութիւններով մարմնի մասերի, մանաւանդ ոտքի մատների քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտնի նիւթը,

ԳԼՄԱՆԻՆ

անունով, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատների և դրոգիստների մոտ Գլխաւոր դէպօ նիւթի հնարող Ֆարմացիի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Էլէկտորալնի փողոց, № 35: Գալմանինի մէջ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.: Պէտք է զգուշանալ խարդախութիւններից:

13—25 Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ(1)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յունիսի 30-ից պ. ԾՈՒՐԻՆՕՎԻ և ընկ. դեղերի ԽԱՆՈՒԹԸ և ՊԱՀԵՍՏԸ կը լինի ԽԻՏԱՐՕՎԻ տանը, Նարուրովի տան կից, որտեղ գտնվում է նահանգական վարչութիւնը Մուզէում մի դիմացը:

3—3

ԳԵՐԱԶԱՆՑ ԱԼԻՒՐ 2-որդ ՏԵՍԱԿԻ

Պատատված մաքուր ցորենից առանց թեփի, բերված է Եյսկից և ծախվում է Կուկիայում նոր բացված պահեստում, Նլիզավէտինսկի փողոց, տուն Քանանովի, Փոթիթիֆլիսեան երկաթուղու վարչութիւնից ոչ հեռու: Նոյն տեղ ծախվում է նոյնպէս Եյսկից բերած և Փոթիում պահվող 5000 պուդ մաքրված գարի:

5—5 (2)

ՄԷԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ, *որ գիտէ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներ, կամենում է* **ԿԱՆՏՈՐՉԻԿԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ** *կամ թարգմանի տեղ ունենալ: Ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեանը:*

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց հիւանդ. Դօրալեվիչ ներքին հ., Բաթինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վ. զօրօվ վիներական և բողազի հ., Բէյլս աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդվօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի կիներական և կաշու հ., Աստուածատուրօվ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. զօրօվ վիներական և բողազի հ., Բաթինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստուածատուրօվ վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վ. զօրօվ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաև չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրիական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Աստուածատուրօվ Օբերխատ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ

ԻԼԻԻ ՀԵՆՐԻԽ ՅԻՄԵՐՄԱՆԻ,

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ԲՈԼՇԱՅԱ ՄՕՐՍԿԱՅԱ, № 42

Առաջարկվում են արտասահմանի ամենալաւ գործարաններից նորերում ստացված երաժշտական գործիքներ:

ՋՈՒԹԱԿՆԵՐ $2\frac{1}{2}$ ր., 5 ր., 6 ր., 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 50 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 150 ր., ԿՆՏՆՏՈՑՆԵՐ (смычекъ) 50 կ., $1\frac{1}{2}$ ր., 2 ր., 3 ր., 5 ր., 8 ր., և աւելի թանգ մինչև 25 ր., ԱՐԿՂՆԵՐ $2\frac{1}{2}$ ր., $5\frac{1}{2}$ ր., 6 ր., 7 ր., 10 ր. և աւելի թանգ մինչև 20 ր.: Հին իտալական և գերմանական ջութակներ մինչև 600 ր.: ՋՈՒԱԿՆԵՐ փոքր դիրքի երեխաների համար 2 ր. 50 կ. մինչև 30 ր.: Ջութակի չկոլա (ինքնուսուցիչ) 2 ր., 3 ր., 4 ր., 5 ր.: ԱԼՏԵՐ 9 ր., 15 ր., 25 ր., 50 ր. և աւելի թանգ: ՎԻՕԼՕՆՉԵԼՆԵՐ 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր., 100 ր. և աւելի թանգ մինչև 600 ր.: Վիոլօնչելի չկոլա 4 ր.: ԿՕՆՏՐԲԱՍ 45 ր., 65 ր., 120 ր. և աւելի թանգ: ԳԻՏԱՐ 3 ր. 50 կ., 5 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 40 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Գիտարի չկոլա (ինքնուսուցիչ) 1 ր. 50 կ., 2 ր., 3 ր.: ՑԻՏՐԱՆԵՐ 14 ր., 16 ր., 25 ր., 35 ր., 50 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Ցիտրայի չկոլա 2 ր., 3 ր. 50 կ., նոտաներ 40 կ., 60 կ., 90 կ. իւրաքանչիւր տեսակը: ՄԱՆԴՕԼԻՆ 10 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ. չկոլա 3 ր.: Ամենալաւ իտալական ԼԱՐԵՐ այդ գործիքների համար, ԿԱՄԵՐՏՈՆ 40 կ., 50 կ., 1 ր., 50 կ., 2. ր.. 6 ր.: Սուրդին կանիֆոլ և այլ պատկանելիք: ՄԵՏՐՕՆՕՄ 8 ր., 12 ր.: Երկաթի ծալվող ՊԻԻՊԵՏՐՆԵՐ 5 ր.: Երկաթի ծալվող պիւպետրներ մոմակալներով 6 ր., 8 ր.: Գերմանական ԳԱՐՄՕՆՆԵՐ 4 ր., 4 ր. 50 կ., 5 ր. 50 կ., 7 ր. 50 կ., 10 ր., 15 ր., 20 ր., 24 ր., 30 ր., 40 ր., և աւելի թանգ: Գարմոնիայի չկոլա և նոտաներ 50 կ., 75 կ., 1 ր., 1 ր. 50 կ., իւրաքանչիւր տեսակը: ԿՕՐՆՈՊԻԱ-ՊԻՍՏԱՆ 18 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ մինչև 100 ր.: Շկոլա (ինքնուսուցիչ) 1 ր. 50 կ., 4 ր., 5 ր.: ԱԼՏԳՕՐՆ, ՆՇԱՆԱՓՈՂԵՐ, ՏՐՕՄԲՕՆՆԵՐ, ՖԼԷՑՏԱՆԵՐ 3 ր., 5 ր., 7 ր., 10 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր., 60 ր. և աւելի թանգ: Շկոլա (ինքնուսուցիչ) $1\frac{1}{2}$ ր., և 3 ր. նոտաներ 40 կ., $1\frac{1}{2}$ ր., 3 ր. իւրաքանչիւր տեսակը: ԿԼԱՐՆԵՏՆԵՐ 6 ր., 8 ր., 10 ր., 15 ր., 20 ր., 30 ր., 40 ր., և թանգ մինչև 60 ր.: Կլարնետի չկոլա 4 ր., Բեկոլո, Զականի, Ֆլաժօլետներ: Անգլիական ԿՕՆՑԵՐՏԻՆՕ 30 ր., 38 ր., 45 ր., 55 ր., 70 ր., 100 ր., և թանգ մինչև 160 ր.: Շկոլա 3 ր., նոտաներ 50 կ., 75 կ., 1 ր., $1\frac{1}{2}$ ր., Գերմանական կոնցերտինօ 3 ր., 4 ր., 5 ր., 8 ր., 10 ր., 12 ր., 15 ր., և թանգ մինչև 30 ր.: Շկոլա (ինքնուսուցիչ) 75 կ., նոտաներ 40 կ., և 1 ր. իւրաքանչիւր տեսակը երաժշտական արկղներ 2 ր., 4 ր., 6 ր., 10 ր., 25 ր., 30 ր., 40 ր., 55 ր., 75 ր., 90 ր., և թանգ մինչև 200 ր.: ՖԻՍԳԱՐՄՕՆՆԵՐ 90 ր., 100 ր. 120 ր., 150 ր., 175 ր., 250 ր. և աւելի թանգ: ԳԱՐՄՕՆՆԵՐ ՖԼԷՑՏԻ 40 ր., 45 ր., 60 ր., 75 ր.. 90 ր.. ԳԱՐՄՕՆՆԵՐ ֆիւտի ՕՐԳԱՆՈՎ 175. և 225 ր.: ՇԱՐՄԱՆԿԱ 8 ր., 12 ր., 20 ր., 30 ր., 40 ր.: Իտալական չարմանկաներ 150 ր., 200 ր., 250 ր.: ՕՐԳԱՆՆԵՐ թաչունների համար 10 ր., 15 ր.: Թմբուկներ, ֆլեյտաներ, բունչուկներ, բանդոնիոն, մետալական շրթունքների բելկաներ, եռանկիւնիներ, գարմոններ և այլն:

Օտար քաղաքներից ստացված պատուէրները կատարվում են անյապաղ և ճշդութեամբ: Ճանապարհածախսը գնողինն է: Ծախվում են հատով և մեծ քանակութեամբ:

1—1

Քաղաքային ուսումնարանական մասնաժողովը յայտնում է, որ սեպտեմբերի 1-ից կը բացվեն Թիֆլիսի մէջ Արհեստական և քաղաքային սկզբնական ուսումնարաններ: Աշակերտների ընդունելութիւնը ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ ուսումնարանում կը սկսվի օգոստոսի 15-ին: Խնդիրքները հասարակ թղթի վրա և ուսումնարանական մասնաժողովի անունով գրված, տրվում են քաղաքային վարչութեան հերթակալ անդամին ամենայն օր առաւօտեան 10—12 ժամը: Խնդիրքի հետ պէտք տրվեն մետրիկական և ծաղիկը պատուաստելու վկայականները և որոշ նշանակված պէտք է լինեն բնակութեան տեղը և տան պոլիցիական համարը: Սկզբնական ուսումնարանի մէջ ընդունվում են 8—14 տարեկան երեխաներ և նրանցից ոչինչ գիտութիւն չէ պահանջվում: Արհեստական ուսումնարանը մտնող երեխաների հասակը որոշվում է 12—16 տարեկան: Երեխաները ամուր կազմվածք պէտք է ունենան ու առաջին դասատուն մտնելու համար նրանցից պահանջվում է. Կրօնից-քրիստոնէական վարդապետութեան կարճառօտ հրահանգները և սրբազան պատմութիւն, ռուսաց լեզուից-կարդալ, գրել և կարդացածը պատմել, հայերի և վրացիների համար նոյնը իրանց մայրենի լեզուով, թուաբանութենից-առաջին 4 գործողութիւնները և պարզ խնդիրների մտաւոր լուծումը, ժամանակի, դրամի, կշեռքի և այլ չափերի գիտենալը:

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿՍԲՐՆԻԱՑԻՆ կից կը բացվին ՍԵՆՆԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՕԿՕԼԱԴ, ԹԷՑ և պատրաստված հանքային զանազան ՋՐԵՐ:

20—40

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Զաք. Դրիզորեանցի «Կովկասեան գրավաճառանոցում» Ընդհանուր աշխարհագրութիւն, Ա. տարի, Նախագիտելիք (հայրենագիտութիւն Թիֆլիսի) 5 պատկերներով. Աշխատասիրութիւն Ն. Սիմէոնեանց: Գինն է 35 կոպ. գումարով առնողներին 20% զիջումն կը լինի:

Մամուլի տակ են, Ընդ. Աշխ. Բ. տարի, մասն ուսումնական (մաթեմատիկական) և Բնական և ընդ. Աշխ. Գ. տարի, մասն քաղաքական: Վերջին երկու գրքերի տպագրութիւնը աւարտելուց յետոյ կը հրատարակուեն նոցա գները: Օտար քաղաքացիք դիմում են:

Въ Тифлисѣ. Кавказская книжная торговля З. П. Грикурова.

18—20

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Հրացաններ, բեվոլվերներ, դանակներ, գրիչներ, անուշահոտութիւններ, սապոն, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ:

17—20

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухнею, большою конюшнею и сараемъ. Объ условіяхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

Дозволено Цензурою 4 Іюля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона